

ԵՐԱԿՐՈՆԵԱ

ԿԱՅԱԿՐՈՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԳՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

28 սեպտեմբերի

Աշխարհի եզրինների հոգեւոր
բարձրագույն առաջնորդին

5 հոկտեմբերի

Հայկական գրադարանների միջազգային
համաժողովի մասնակիցներին



Ս. Ս. Օ. Ս. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հյուսիսային Իրաքից Հայաստան ժամանած աշխարհի եզրինների հոգեւոր բարձրագույն առաջնորդ Միրե-Սիրա Թախսին Բեգի գլխավորած պատվիրակությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ի դեմս Թախսին Բեգի, շնորհավորեց հայաստանաբնակ եզրիններին՝ սեպտեմբերի 29-ին Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղում սրբատեղիի օրհնության առիթով: Նորին

Միրե-Սիրա Թախսին Բեգը գոհունակությամբ նշեց, որ Հայաստանում եզրինների ազատորեն ապրում են իրենց ազգային-կրոնական կյանքով, ինչի վկայությունն է Արմավիրի մարզում բացվելիք սրբավայրը:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Հովակիմ եպս Մանուկյանը եւ Իրաքի հայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ Պարույր Հակոբյանը:

2 հոկտեմբերի

Գերմանիայի Բուկոլտերգայի
փոխնախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բուկոլտերգայի փոխնախագահ Վոլֆգանգ Թիրգեի գլխավորած պատվիրակությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախությամբ հայտնեց, որ երկու երկրների միջեւ հարաբերություններն առաջընթաց են զարգացում են ապրում՝ բարի արգասիքներ բերելով երկու ժողովուրդներին: Նորին Սրբությունը նշեց, որ միջշնորհարարական հարաբերությունների սերտացումը կնպաստի տարածաշրջանային խնդիրների առավել խոր ընկալմանը՝ խաղաղության կայունացման ու առկա խնդիրների խաղաղ կարգավորման ուղղությամբ:

Վեհափառ Հայրապետը նաեւ իր գնահատանքը բերեց փոխնախագահ Վոլֆգանգ Թիրգեի՝ Բուկոլտերգայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման գործում



իր ունեցած կարեւոր ներդրման համար:

Անդրադարձ կատարվեց Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու եւ ընդհանուր եկեղեցիների կապերին ու համագործակցությանը, եկեղեցի-պետություն հարաբերություններին, ինչպես նաեւ տարածաշրջանում առկա խնդիրների տարածաշրջանում առկա խնդիրների կարգավորման գործում հոգեւոր առաջնորդների դերակատարությանը, ազգային ինքնության պահպանության գործում եկեղեցու առաքելությանը:

Հանդիպմանը ներկա էր Գերմանիայի հայոց թեմի փոխառաջնորդ Սերոբյե վրդ. Իսախանյանը:

Մայր Աթոռ Սբ Էջմիածնում մեկնարկեց «Անցյալի պահպանություն» հանուն ապագայի» խորագրով Հայկական գրադարանների միջազգային երկրորդ համաժողովը, որը կազմակերպվեց Եր Մայր Աթոռ Սբ Էջմիածնի ու ՀՀ մշակույթի նախարարության համատեղ ջանքերով: Համաժողովին մասնակցում էին Հայաստանի եւ Սփյուռքի, ինչպես նաեւ Հայ Եկեղեցու Նվիրապետական աթոռների ներկայացուցիչներ:

Համաժողովի բացման ընթերցվեց Ս. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ գրատպության 500-ամյակի առիթով:

Նույն օրը համաժողովի մասնակիցներին ընդունեց եւ իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ բարի արդյունքներ մարդկային համագործակցությանը: Նորին Սրբությունը կարեւորեց միջգրադարանային համագործակցությունը, որի շրջանակներում ծրագրվում է հայագիտական գրականության շտեմարանի ստեղծում: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաեւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնում այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքներին՝ նշելով, որ առաջիկայում Մայր Աթոռում բացվող մատենադարանը՝ իր ժամանակակից հնարավորություններով, լավագույն կձառնի հայագիտության եւ աստվածաբանական գիտությունների զարգացմանը:

Հանդիպմանը տեղի ունեցավ նաեւ շքանշանի հանձնման արարողություն: Ազգային-եկեղեցական եւ գիտական բեղուն գործունեության համար Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվով բարձր շքանշան շնորհվեց համաժողովի մասնակցի Ներսես ավագ քնն. Ներսեսյանին (Սեծ Բրիտանիայի հայոց թեմ):

Հայրապետական կոնդակն ընթերցեց Համակցության հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպս Նալբանդյանը: Կոնդակում մասնավորապես ասված է. «Տերունապատվոր Ձեր

սպասավորությունը Դուք իրականացրել եք Մեծ Բրիտանիայի Հայոց թեմում՝ հոգեւոր սնունդ մատուցելով մեր Եկեղեցու բարեպաշտ զավակներին: Երջանկալիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Դուք Ձեր ուսումնառությունն ամբողջացրեցիք Լոնդոնի հեղինակավոր Քինգս



Ջոլեջ համալսարանում՝ արժանանալով Աստվածաբանության բակալավրի եւ Փիլիսոփայության դոկտորի պատվավոր կոչումների: Վաստակաշատ եկեղեցականիդ գործունեության ներկարամյա տարիներն արդյունավորվել են Բրիտանական գրադարանի Երիտտոնեական Արեւելքի բաժանմունքի տնօրենի պատասխանատու պաշտոնում...

Մասնավոր գոհունակության առիթ է Մեզ համար հաստատել, որ բերուն է եղել Նաեւ Ձեր գրիչը՝ նորանոր ակունքներ բխեցնելով հավատացյալ հայորդյաց կրոնական գիտելիք գործաշնան համար: Այսօր Ձեր հեղինակությամբ ընթերցողի սեղանին են արժեքավոր ուսումնասիրություններ, որ արդյունք են բազում տարիների Ձեր նվիրյալ եւ անհոգաբեկ աշխատանքի: Ձեր գիտական գործունեության արգասիքները ամրապնդում են Մեր հավատավոր զավակների հավատքը, համալրում իմացության պաշարը:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը Ներսես ավագ քահանային հանձնեց «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշանը՝ մարդկային երկար տարիների արեւշատության եւ նորանոր գիտական ձեռքբերումների:

7 հոկտեմբերի

Սիրիահայ ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սիրիայի Արաբական Հանրապետության ՀԲԸՍ անդամներին եւ Հալեպի Կիլիկյան վարժարանի հոգաբարձուներին՝ ուղեկցությամբ Համակցության հայոց թեմի քաղաքական ժողովի ատենապետ, ՀԲԸՍ կենտրոնական վարչական ժողովի անդամ, Սիւրի Արեւելքի եւ Հայաստանի ծրագրերի պատասխանատու Վազգեն Յակոբյանին:

Պրն Յակոբյանն անդրադարձավ Սիրիայում տիրող կացությանը եւ ներկայաց

րեց սիրիահայերին օժանդակելու նպատակով ստեղծված հատուկ հանձնախմբի աշխատանքները:

Ողջունելով եւ հայրապետական իր օրհնությունը բերելով սիրիահայ ուխտավորներին՝ Վեհափառ Հայրապետն իր մտահոգությունն արտահայտեց Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունների, ի մասնավոր՝ սիրիահայ համայնքի ծանր կացության առիթով:

Շարունակությունը՝ էջ 2

7 հոկտեմբերի

Սիրիահայ ուխտավորներին



Սկզբը՝ էջ 1

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավով արձանագրեց, որ պատմության ընթացքում Սիրիայում հայ ժողովրդի զավակների ջանքերով կերտված մշակույթն ու ժառանգությունը, հոգեւոր-ազգային արժեքներն այսօր վտանգված են:

Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց ՀԲԸՄ-ի ներկայացուցիչներին եւ բոլոր այն ազգային հաստատությունների անդամներին, ովքեր այս ղեկավարին իրա-

վիճակում հաստատուն կերպով կանգնած են Սիրիայի հայ համայնքի կողքին եւ ջանք չեն խնայում հայ ժողովրդի զավակների հոգը թեթեւացնելու եւ օգնության ձեռք մեկնելու համար:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը մարդեղ, որ Տերը խաղաղություն հաստատի Սիրիայում, որպեսզի Սիրիայի ժողովուրդը, որի անբաժանելի մասն է կազմում հայ համայնքը, կարողանա վերադառնալ իր բնականոն լիարժեք կյանքին:

Բուենոս Այրեսի ՀԲԸՄ սիկանաց միության անդամներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բուենոս Այրեսի ՀԲԸՄ տիկնանց միության անդամներին՝ ուղեկցությամբ ՀԲԸՄ պատվավոր անդամ Հարություն Սարաֆյանի:

Պրն Սարաֆյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց միության գործունեությունը եւ Արքեպիսկոպի հայոց թեմին միության անդամների կողմից ցուցաբերվող գորակցությունը:

Անդրադառնալով Արքեպիսկոպի հայոց թեմին եւ համայնքին՝ Վեհա-

փառ Հայրապետը գոհունակությամբ ընդգծեց, որ արգենտինահայ համայնքն ամենակազմակերպված, հայաշունչ եւ օրինակելի հայկական գաղթօջախներից մեկն է: Հայոց Կաթողիկոսը բարձր գնահատեց թեմական կյանքի աշխուժացմանն ուղղված ձեռնարկներն ու միջոցառումները՝ ներկայներին հորդորելով մասնավոր ուշադրություն դարձնել երիտասարդ սերնդին, նրանց կրթել ու դաստիարակել հայրենասիրության եւ եկեղեցասիրության ոգով:

8 հոկտեմբերի

«Համաշխարհային ժառանգության խաղաղության կազմակերպության դասվիրակությանը»



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Համաշխարհային ժառանգության քաղաքներ» կազմակերպության տնօրենների խորհրդի անդամներին՝ ուղեկցությամբ Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանի:

Կազմակերպության նախագահ, Բիմսթերի (Նիդերլանդներ) քաղաքապետ Ջարրի Բրիքսմանը Նորին Սրբությունը ներկայացրեց կազմակերպության կողմից կատարվող աշխատանքները, ինչպես նաեւ ուրախություն հայտնեց Էջմիածնի քաղաքի տոնի օրը Հայաստանում գտնվելու առիթով:

Նորին Սրբությունը կարեւորեց կազմակերպության առաքելությունը՝ ի խնդիր պատմական քաղաքների հոգեւոր-մշակութային արժեքների պահպանության: Խոսելով Հայաստանի պատմամշակութային արժեքների մասին՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ հայ ժողովուրդը բոլոր ժամանակներում յուրահատուկ վերաբերմունք է դրսևորել իր արժեքներին:

Իր նկատմամբ եւ, հակառակ դարերի ընթացքում կրած կորուստների եւ ավերածությունների, ջանք չի խնայել վերականգնելու եւ նորոգելու իր սրբավայրերն ու պատմական հուշարձանները: Անդրադառնալով հարուստ պատմական ժառանգության պահպանմանն ուղղությամբ Հայոց եկեղեցու կողմից ձեռնարկվող միջոցառումներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց, որ եկեղեցին իր սուր միջոցներով աստուծոյ հնարավոր՝ հայրերից ստացած ժառանգությունն անխաթար ու ամուր պահելու եւ այն նոր սերունդներին փոխանցելու համար:

12 հոկտեմբերի

ՈՂՏՐԱՆԱՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Ղաշնության տրանսպորտի նախարար, ՀՀ եւ ՌՂ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Մաքսիմ Սոկոլովին՝ ուղեկցությամբ ՌՂ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Օլեգ Եսայանի:

Մաքսիմ Սոկոլովն ուրախություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ հանդիպման առիթով՝ տեղեկացնելով անցած օրերի ընթացքում հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքների մասին:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց երկու երկրների պատվիրակությունների արդյունավետ համագործակցության առիթով՝ ընդգծելով, որ այն համահունչ է երկու ժողովուրդների դարավոր բարեկամությանը ու եղբայրական ոգուն: Նորին Սրբությունը ողջունեց Հայաստանի եւ Ռուսաստանի

տնտեսական գործակցության շրջանակներում իրականացվող համատեղ ծրագրերը՝ հաջողություն մաղթելով միջկառավարական հանձնաժողովի հետագա աշխատանքներին:

Հանդիպման անդրադարձ կատարվեց երկու երկրների հոգեւոր կյանքին, Հայաստանյայց Առաքելական եւ Ռուս Ուղղափառ եկեղեցիների միջեւ առկա ջերմ փոխհարաբերություններին:



ՄԱՀԱԶԴ

Ի Տեր ննջեց Երուսաղեմի Հայոց Պատրիարք Թորգոմ արք. Մանուկյանը



Հոկտեմբերի 12-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Երուսաղեմի պատրիարքական փոխանորդ Նուրիան արք. Մանուկյանից տեղեկացավ, որ Երուսաղեմում երկարատեւ հիվանդությունից հետո՝ կյանքի 93-րդ տարում, ի Տեր ննջեց Երու-

սաղեմի Հայոց Պատրիարք Թորգոմ արք. Մանուկյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Գերագույն հոգեւոր խորհուրդը եւ Հայ Եկեղեցու ողջ եկեղեցական դասը սգում են բազմապատկեր Պատրիարք սրբազան հոր մահը՝ աղոթելով, որ Տերը Սուրբ Հոգու մխիթարությունը պարգեւի հավատավոր մեր ժողովրդին եւ Իր խնամքի եւ օրհնության ներքո պահի Երուսաղեմի Հայոց Պատրիարքական Աթոռը եւ նրա զինվորյալ միաբանությունը:

Թորգոմ արք. Մանուկյանը ծնվել է 1919 թ. փետրվարի 16-ին, Բաղրադի իյուսիսում (Իրաք)՝ Բագուբա քաղաքի մոտ գտնվող փախստականների ճամբարում: Բաղրադի Սրբոց Թաքազանգա հայկական դպրոցում նախակրթական ուսումն ավարտելուց հետո ընդունվել է Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի Սրբոց Հակոբյանց ժառանգավորաց վարժարան: 1936 թ. սարկավագ է ձեռնադրվել՝ ձեռնադրեց երջանկահիշատակ Պատրիարք Թորգոմ արք. Գուշակյանի: 1939 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ստանալով Թորգոմ անունը: 1939-46 թթ. Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանում տարբեր պաշտոններ է վարել: աշխատել է Պատրիարքարանի «Սին» ամսագրի խմբագրությունում: 1946 թ. մեկնել է ԱՄՆ եւ Նշանակվել Հյուսիսային Ֆիլադելֆիայի (Փենսիլվանիա) Ս. Երրորդություն հայկական եկեղեցու հոգեւոր իովիվ: 1951 թ. Նշանակվել է թեմի առաջնորդական փոխանորդ: 1954 թ. վերադարձել է Երուսաղեմ եւ Նշանակվել ճեմարանի տեսուչ, կատարել է նաեւ Պատրիարքարանի դիվանապետի պարտականությունները: 1960 թ. ընդունվել է Զեմբրիիչ եպիսկոպոսական աստվածաբանական դպրոց (Մաապուստեթ): 1962 թ. ընտրվել է Հայ եկեղեցու Ամերիկայի Արեւմտյան թեմի առաջնորդ:

Նույն թվականի հոկտեմբերի 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ձեռնադրվել է եպիսկոպոս: 1966 թ.՝ Արեւմտյան թեմի առաջնորդի պաշտոնում 4 տարի ծառայելուց հետո, ընտրվել է Հայ եկեղեցու Ամերիկայի Արեւելյան թեմի առաջնորդ: 1968-ին նրան շնորհվել է արքեպիսկոպոս պատիվ:

Արեւելյան թեմի առաջնորդի պաշտոնում 24 տարի ծառայելուց հետո ընտրվել է

Երուսաղեմի Պատրիարք: Ստացել է մի շարք ակադեմիական պարգևներ, արժանացել է Նյու Յորքի ընդհանուր աստվածաբանական ճեմարանի պատվավոր դոկտորի կոչման: 1986 թ. ստացել է Նաեւ Ամերիկայի երկու գլխավոր պարգևները՝ «Ազատության արձան» եւ «Էլիզ Կլյուք» պատվո շքանշանները:

Մեծ ավանդ է ունեցել միջազգային եկամեկի հարաբերությունների զարգացման գործում: Ծառայել է ԱՄՆ-ում Զրիստոսի եկեղեցիների ազգային ժողովի հանձնաժողովում, նախագահել է «Կրոնն ամերիկյան կյանքում» խորհուրդը: Եղել է նաեւ «Խղճմտանքի կոչ» հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամ:

Թորգոմ Պատրիարքը հեղինակ է 20 մենագրության, որոնց թվում՝ բանաստեղծական երեք ժողովածու, հայկական սր Մետաբազի ուսումնասիրություն, հայոց Պեղեղեմի նվիրված գրքեր եւ Երուսաղեմի սուրբ վայրերի մանրամասն ուղեցույց: Պատրիարքը հայրը ճանաչված կոմիտասագետ էր:

Հոկտեմբերի 14-ին՝ սր Պատարագի ավարտին, Մայր տաճարում կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ Հայ եկեղեցու վաստակյալ սպասավորի հոգու խաղաղության համար:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:



Սկիզբը՝ թիվ 18

Գրիգոր Շղթայակիր պատրիարքը եկել էր մայրաքաղաք՝ Երուսաղեմի պատրիարքության խնդիրներին վերջնական լուծում տալու համար, եւ արդեն երկու տարի գտնվում էր Կ. Պոլսում։ Սակայն Եգեմ Մեծի՛նձ փաշայի մեծ վեգիր դարձավ գործին վերջ տալու ֆրանսիական դեսպանի վրա էր, որի կարծիքը հայանպաստ էր։ 1738 թվի փետրվարի 19-ին նոր դիմում արվեց դեսպանին՝ միջնորդության խնդրանքով, բայց մարտի 13-ին մեծ վեգիրը գնաց Ավստրիական կայսրության դեմ պատերազմելու, ուստի գործը լուծում չստացավ։ Ժողովրդի մեջ հայ-լատինական մերձեցումը, հանուն Երուսաղեմի, խնդիրներ չէր հարուցում, բայց դրա դաւադրելը դժգոհության պատճառ դարձավ, եւ ապրիլի 2-ին՝ Չառկի նախօրեին, շուրջ 2200-ը տարավեցին, որ կաթոլիկամետները բազմությամբ գնան լատինացիների եկեղեցի։ Կոլոտն ստիպված եղավ դիմել լատին եպիսկոպոսին, անձամբ գնալ ֆրանսիական դեսպանի մոտ, որ համաձայնության պայմանները կատարվեն, եւ ժողովրդին գան։

ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՂԱԶԱՐ Կ ՏՎՅԵՇԻ (1738-1751)

գատվելու առիթներ չտան։ Սակայն դեսպանը պահանջեց դավանության թուղթ տալ՝ ըստ լատին պատմագրի։ Իրականում դեսպանը կամեցել էր հայերի իրավունքների վերաբերյալ վավերագրեր տեսնել, որ դրանց ոգով միջնորդությունը կատարի։ Դեսպանի միջնորդությունը կրթերը հանդարտեցրեց, եւ լատինամետներն սկսեցին հաճախել հայոց եկեղեցի։ Նրանց համար առանձին եկեղեցի ունենալու խնդիրը կրկին մեջտեղ եկավ, սակայն Կոլոտն կարողացավ դրա դեմ անել։ Այնուամենայնիվ մի ամբողջ տարի անցավ անարդյունք, քանի որ Վիլնյով թուրքերի եւ գերմանացիների միջեւ հաշտություն կայացնելու կապակցությամբ, որպես միջնորդ, ստիպված եղավ ռազմաճակատ մեկնել։ Շղթայակիրն այդ ընթացքում երեք անգամ ընդարձակեց Սկյուտարում Երուսաղեմի վանքի այգին՝ կառուցելով վանատուն եւ մատուռ, իսկ Մայր Եկեղեցու համալիրում՝ վանատուն Երուսաղեմի համար։

Սյուսաղեմում ցանկություն հայտնվեց հաշտություն կնքելու Ավստրիական կայսեր հետ, եւ քանի որ մեծ վեգիր Եգեմ Մեծի՛նձը դրան հակառակ էր, պաշտոնական արվեց եւ քստրվեց Զոհուր։ Նրան հաջորդեց Զաքի Մեծի՛նձը փաշան՝ Այվազ կամ Էլիաս (Էվիաս) մականունով։ Զաշտությունը կնքվեց Բեյրութում սեպտեմբերի 18-ին՝ թուրքերի համար նպաստաբեր պայմաններով։ Պայմանագիր կնքվեց նաեւ Ռուսաստանի հետ։

Զաշտության պայմաններով՝ թուրքերը տիրում էին Բելգրադին եւ Օրշովային, ստանում էին Ուկրաին եւ Բուդապեստայի մարզերը պետք է քանդվեց, Սեւ ծովի ռուսական նավատորմը պետք է վերացվեր, եւ ռուսներն իրենց գրաված վայրերը պետք է վերադարձնեին։ Վիլնյովի կշիռը՝ որպես միջնորդի, թուրքերի աջքուն խիստ մեծացավ։ Մեծացավ նրա ազդեցությունը։ Կոլոտն ու Շղթայակիրն ապավինեցին նրա միջնորդությանը, քանի որ հայերի եւ լատինների շահերը համընկնում էին հույների ունեցած թուրքերի խնդրում։ Հույներն էլ հասկացան, որ վիճակը փոխվել է, ուստի փորձեցին հայերին մոտենալ՝ վախենալով, որ դեսպանի հզոր ազդեցությունն իրենց դեմ կողովի, եւ իրենք շահելու փոխարեն կորուստներ կունենան։ Մեծ ահա 1739 թվի ապրիլի 7-ին՝ ֆրանսիական դեսպանատանը փոխադարձ համաձայնություն կայացվեց՝ հաստատվելով երկու պատրիարքների ու երկու ազգերի մեծավորների կողմից՝ խտաբերելով լեզվով, որն այդ ժամանակ միջազգային կիրառում ուներ։ Այդ համաձայնությամբ կողմերը ճանաչում էին միմյանց իրավունքները, որ մինչ այդ կաշին։ Ասորիները, հաբեշները եւ Եգիպտական դպրիները ճանաչում էին հայերի հետեւորդը։ Ընդհանուր իրավունքներում հայերը եւ հույները հավասար էին ճաշակում, բայց՝ հույների նախապատվությամբ։ Դեսպանի խորհրդով Կոլոտը 1739 թվի հունվարի 1-ին նամակ գրեց Ֆրանսիայի վարչապետ կարդինալ Անդրեաս Ֆլորիսին եւ պատասխան ստացավ օգոստոսի 31-ին՝ հավաստագրմամբ, որ Վիլնյովի միջոցով կգործեն ի նպաստ հայերի եւ դավանական խնդիրներ չեն բարձրացնի։ Հայերը դրանից հետո նոր «հաթթեղների» կամ հրովարտակ ստացան Մահմուդ Ա սուլթանից, որով խնդիրը վերջնականապես հարթվեց։ Նույնատիպ հրովարտակ տրվեց նաեւ լատիններին՝ հայերի հետ հարաբերությունների ամուլնությամբ։ Լատինների հետ հարաբերությունները կարգավորելու համար հույները նույնպես դիմեցին դեսպանին, եւ նրանց խնդրանքը հարգվեց։ Դրանով երեք ազգերը, ազգի ճիշտ՝ դավանական երեք ուղղությունների ներկայացուցիչները հավասար իրավունքներով վավերացված հրովարտակներ ստացան։ Երուսաղեմյան կնճիռը հարթվեց, սակայն հաբեշների՝ հույների կողմից հափշտակված վիճակը մնաց նրանց ձեռքում։ Հրովարտակը տրվեց 1740 թվին։

Կարծես ամեն ինչ լավ էր, սակայն Երուսաղեմում խնդիր ծագեց հայերի եւ լատինների միջեւ։ Յուդաբերդից սեղանի եւ Բեթղեհեմի եկեղեցու հետ կապված։ Պատճառը, անշուշտ, հաշտության կայացման լուրի ու տեղի հասնելն էր։ Դեսպանին տեղյակ պահեցին, եւ նա յուրայիններին կարգադրեց վեճեր չհարուցել։ Նա նամակ տվեց Շղթայակիրին՝ 1740 թվի մայիսի 6-ի թվականով, եւ վերջինս այն իր տեղապահ Գաբրիել վարդապետին ուղարկեց։ Իր նամակում Շղթայակիրը գովում էր դեսպանին եւ յուրայիններին կոչ էր անում հաշտվել լատինների հետ եւ ատեւության տեղիք չտալ։ Շղթայակիրը նաեւ մեծ ուշադրություն դարձրեց պարտքերի մարմանը, որոնք գոյացել էին այդ չորս տարիների ընթացքում։ Նա գտավ բարեբանների, շարժեց նրանց զգացումները եւ հայթայթեց պետք եղած գումարը։ Պարտքերի պատճառով նա Կ. Պոլսում մնաց եւս մի քանի ամիս եւ ծովով Երուսաղեմ մեկնեց օգոստոսի 25-ին։ Ռոդոսյանում նա հանդիպեց տեղի առաջնորդ Հովհաննես վարդապետի հետ, հյուրընկալվեց նրա կողմից եւ նվերներ հավաքեց։ Դարդանեղի ելքի մոտ՝ Բողազիսարում, նրա նավը խրվեց ծանաղուտում, եւ ուղեւորները ծանցվեցին։ Հոգուցից հեռանալուց հետո նրանց նավը սկսեց ջուր լցվել, եւ ուղեւորներն ստիպված եղան չորս օր ու գիշեր ջուրը դուրս թափել։ Վերջապես սեպտեմբերի 6-ին՝ հաշի բարեկենդակի կիրակնաօրեին, նա հասավ Յուդաբերդի 14-ին, մուտք գործեց Երուսաղեմ՝ ուղեւորի ուխտավորներով հանդերձ՝ բացակայելով չորս տարի եւ չորս ամիս։ Նրա բացակայության օրոք Երուսաղեմում էլ խնդիրներ էին ծագել, բայց Գաբրիել տեղապահը կարողացել էր հաջողությամբ հարթադարձնել դրանք։ Վերջինս գործերը կանոնավոր վիճակում հանձնեց պատրիարքին։

Շարունակությունը՝ էջ 5

ԳԵՆՈՐԳՅԱՆ ԽՈԳԵՆՈՐ ԲՆԱԴԱՐԱՆԸ ՏՈՆԱԽԱՆԵՑ ԻՐ 138-ՐԴ ՏԱՐԵՂԱՐԸ



Սեպտեմբերի 29-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում մեծ հանդիպում կայացրեցին Նշվեց Ս. Գեորգ զորավարի տոնը։ Տոնի առիթով Մայր տաճարում Պատարագ մատուցեց Մայր Աթոռի հոգեւոր կրթական հաստատությունների վերադարձող Գեորգ եպս Սարոյանը։ Արարողության ընթացքում պատարագից արագանը հավիւր պատշաճի բարոյ խոսեց՝ անդրադառնալով համայնքիստեղծական մեծ սրբի վկայաբանությանը։ «...Հայ ժողովուրդը, որ աշխարհում առաջինն ընդունեց քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն, իր հոգեւոր գիտակցությամբ այն արժեքի հետ եւ կապվել, որոնց հավատքի օրինակը համընկել է իր հոգեւոր փորձառության հետ։ Զրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց անմիջապես հետո հավատքի պաշտպանության հարցը պատմության ընթացքում դարձավ մեծ համարձակության արձագանքի մի մասը։ Դրա լավագույն օրինակն է հայ ժողովրդի գոյության դարձադրուկ կազմող Ավարայրի հերոսամարտը։ Պատահական չէ, որ հայ ժողովրդի բարեպաշտական մտածողության մեջ ամենամեծ տեղը հատկացված է երկու գիկվորականների՝ սբ Սարգիսի եւ սբ Գեորգիին։ Ազատության համար պայքարի պատմության ընթացքում ո՞վ պետք է ոգեւորեր հայ ժողովրդին՝ հաստատելու մասի իր հավատքի մեջ, լինել անդրդվելի, եթե ոչ հավատքի այս համաժ պահպանները։ ...Նրանց քաղության շնորհիվ քրիստոնեությունը հաղթանակ տարավ։ Չլինեին Աստուծո այս քաջարի մարդիկ, քրիստոնեությունը արգելված, հալածված կրոն էր մնալու։ Մարդու աշխարհը շնորհի ազատությունն է, իսկ քրիստոնեությունը միայն

ազատության մեջ կարող է լիարժեք արտահայտվել։ Այս ազատության համար իրենց կյանքը գոհաբերեցին Աստուծո վկաները, այդ թվում նաեւ հավատարմի վկա ս. Գեորգ զորավարը»։ Իր խոսքում Գեորգ արագանը նաեւ տեղեկացրեց, որ Ս. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Բ Ամենայն Յայոց Կաթողիկոսի տնօրինությամբ այսուհետ կվերականգնվի Սբ Գեորգի տոնին Գեորգյան հոգեւոր ճեմարանի տարեդարձը Նշելու ավանդույթը։ Գեմարանը հիմնադրվել է Գեորգ Դ Ամենայն Յայոց Կաթողիկոսի կողմից 1874 թ.՝ Ս. Գեորգի տոնին, եւ ի պատիվ տոնի՝ անվանվել Գեորգյան։ Պատարագի արարողությունը հետո տոնի առիթով ճեմարանի հանդիսությունների սրահում Ամենայն Յայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Գեորգյան հոգեւոր ճեմարանի 138-րդ տարեդարձին նվիրված հանդիսություն։ Հանդիսության ասմունքով, ազգային եւ հոգեւոր երգերի կատարումներով հանդես եկան ճեմարանի անդամները։ Ավարտին ներկայանեին իր հայրական օրինությունը բերեց Ամենայն Յայոց Կաթողիկոսը։ Ուրախություն հայտնվեց Նիքիթական տոնի առիթով՝ Նորին Սրբությունն անդրադարձավ մտաւոր Գեորգ Յայոցպետի՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնում հոգեւոր-կրթական հաստատությունները վերահաստատելու տեսլիքին։ Նորին Սրբությունը խորհրդանշական նկատեց ճեմարանը



նր սբ Գեորգ զորավարի անունով կոչելը, որպեսզի ապագա եկեղեցականների իրենց առաջնորդող ունենան սբ Գեորգ զորավարի անձը, Տիրուք, ամբողջական ընթացքում Յայոց եկեղեցին շեւացրած լուսավոր կերպարներին, որոնցից մեկն է նաեւ Գեորգիս, եւ որ մենք ցանկանում ենք կրթել ու կրթել մեր հոգեւոր-կրթական հաստատություններում, որպեսզի այդ կրթողականները, հարկի ներքո ունում առնող յուրաքանչյուր անձ ունենա գործը հավատք եւ հավատարմության ու նվիրվող ոգի, ի պահաճել հարկի նախաատկության պայակ վերցնի, ինչպես մեր հայրերը՝ հանուն Երիտաւրի ու տուրք հավատքի»,- ասաց Յայոց Յայոցպետը՝ կոչելով այս տոնին մեկ անգամ եւս անդրադառնալ հոգեւորականի կոչմանը եւ առաքելությանը, որպեսզի սբ Գեորգ զորավարի օրինակով կերտվի ոգին, գորանա մեր հա-

վառքը, պայծառանա մեր առաքելության տեսլիքը։ Գաբրիել Բ Կաթողիկոսը հորդորեց ըստ ամենայնի նմանվել եկեղեցական պատմության ընթացքում Յայոց եկեղեցին շեւացրած լուսավոր կերպարներին, որոնցից մեկն է նաեւ Գեորգիս, եւ որ մենք ցանկանում ենք կրթել ու կրթել մեր հոգեւոր-կրթական հաստատություններում, որպեսզի այդ կրթողականները, հարկի ներքո ունում առնող յուրաքանչյուր անձ ունենա գործը հավատք եւ հավատարմության ու նվիրվող ոգի, ի պահաճել հարկի նախաատկության պայակ վերցնի, ինչպես մեր հայրերը՝ հանուն Երիտաւրի ու տուրք հավատքի»,- ասաց Յայոց Յայոցպետը՝ կոչելով այս տոնին մեկ անգամ եւս անդրադառնալ հոգեւորականի կոչմանը եւ առաքելությանը, որպեսզի սբ Գեորգ զորավարի օրինակով կերտվի ոգին, գորանա մեր հա-

Շնորհավորելով Գեորգյան հոգեւոր ճեմարանի տեղադրւթյաւը, դասախոսներին եւ անդերին՝ Վեհափառ Յայոցպետը աղոթքով մարդեք, որ երկնավոր Տեղը միշտ օրինակ պահի իշխանաւը հաստատության իմաստորդ լուսաւոգի Յայոցպետի եւ գորացւն ճեմարանի իր առաքելության մեջ։

**Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա գտնվեց
Վաղարշապատ քաղաքի տոնական միջոցառումներին**

Հոկտեմբերի 7-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրադույնի Պատվոգրերը և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Կաղարշապատում մասնակցեց քաղաքի տոնի առիթով հրավիրված «Համաշխարհային ժառանգության քաղաքներ» կազմակերպության տնօրենների խորհրդի կիսուրի բացմանը և հայապետական իր պարգամը, օրհնությունն ու շնորհավորանքները բերեց ներկայիս:

«Այսօր ուրախություն ենք ապրում ամենքս, քանզի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով պատկալյալ մեր օրինելալ քաղաքի տարեդարձ ենք տոնում: Ավիրապան են հիշատակներդ պատմական այս քաղաքի: Այստեղ է երկնի վերին խորաններից հրաշապառ կերպով իջել հարուցւյցալ մեր Տերը՝ Դիտու՝ Զրիստոսը, եւ Սուրբ Գրիգոր Լուսավորչին այս վայրում է ունեցել իր լուսեղեն տեսիլքը: Այստեղ է մեր ժողովուրդը դիմավորել հայոց աստվածատուր գրեթե իր մտքի հիսաքանչ համեարմով երկնած Յայաստան վերադարձող սուրբ Մեսրոպ Մաշտոցին: Ինգեղուն եւ մտավոր մեր գաղթոնքն ու ծաղկոնքը սկսվել են Վաղարշապատ-Էջմիածին աստվածօրինելալ քաղաքից, որի պատմական անցյալը լուսավորվել է քրիստոնեական արշալույսի նոր հորիզոններով: Այստեղ են համայնաբնել մեր եղանեկի Կաթողիկոսներն ու հայոց թագավորները հավատացյալ ժողովրդի հետ միասին, ուրախացել մեր ազգային եւ հոգեւոր տոններով, համայնամբ արդոթ բարձրացրել առ երկնավայրը: Այստե-

դից եւս դողանջել կոչնակ զանգե
րը նաեւ հայրենայաց պատշտպա
նութեան՝ Ավարայրից Սարգսրա
պատ, այո՛, նաեւ՝ Արցախ:

Դարեր շարունակ Հայոց մաշխափող տարբեր կողմերից, առնուեալ նաեւ ողջ աշխարհի փյուռ եղեղներէից այս քաղաքը յուստավորաբար այցելել եւ այժմ ըստ բազում հայորդիներ եւ ուր տավոր հյուրեր՝ խոնարհվելու մեծ քաղաքի արտօթյուններին, տեսնելու Էջմիածինը, որը պատմութեան հողովույթներուն փարոսն էր այս լույս սփռող ի Մայր Վերոյայստ եւ շարունակուն եւ լինելով քաղաքի քաղաք։ Սուրբ Էջմիածինը հապատքի վեմն ու սրբազան կեցտունն է համայն առ ժողովուրդի։ «Այս սրբավայրում՝ Իջմալ Սուրբ Տեղուն է գտնվում հայ ժողովրդի սիրտը։ Սիրիի Էջմիածինը, ներս մտիի, համբուրիի Իջմալ Սուրբ Խորանը եւ դու համբուրալ յիկեսն ամբողջ աշխարհով մեկ կրկնված ողջ տարազիի ազգիս», Իրաւուն է Պերն Պողոշյանը,- նշելով մեծախաղ Հայրապետը։

խոսքն ուղղելով վարարքապետցիների՝ Նորիս Սրբություններին, որ պատիվ ու նաեւ պատասխանատվություն է լինել բնակիչ Այս քաղաքի. «Էքմիածնաբակի այդ զավակները մշտապես առանձնահատուկ կերպով վկայել են իրենց մեծագույն սերը, որ ունեն հանդէպ լուսավորչախառատ Սայր Վարդը որն Սուրբ Եկրեցու: Այս իմաստով նաեւ յուրաքանչյուր հայ Էքմիածից է Սուրբ Էքմիածինն իր պատկանելությանը, մեր նկիրական հոգեւոր

կենտրոնի հանդեպ որդիական ջերմ սիրո և անխախտ հավատարմության ակայությունը: Մեր ժողովուրդը միշտ հավատացել է, որ Սուրբ Էջմիածնի լույսը ամենա մեծ և շարունակական է պայծառ շուրջաթափանցելով կաթոլիկների բաշխել սիրաստուն իր զգականների՝ հաղթահարելու ամեն փոքր ծուլթյուն ու ներդուլթյուն, կենտելու բարոյ ու պայծառ կյանք, իրականություն զարմեցնու ազնիվ ու արդար երազները հաղթ ժողովրդի՝ հորդորելով նաեւ նորոգվել Էջմիածնի սիրով, ապրել աստվածահանճ ընթացքով, միասնաբար խնամել ու ծաղկեցնել բաղաբը, պահպանել հալ ժողովրդի նկիրական ու դարափոք սրբությունները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը
 ևս եւ իր գլխահատանքը հայտնեց
 քաղաքի իշխանություններին ի-
 ռենց աշխատանքի եւ գործունեու-
 թյան համար՝ ի խնդիր Վաղարշա-
 պատ քաղաքի առաջընթացի ու
 բարօրության:

Հանդիսավոր նիստից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը՝ ղեկցությամբ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի, Էջմիածնի քաղաքապետ Կարո Գրիգորյանի եւ այլ պաշտոնատար անձանց, ծառիկներ դրեցին Արմավիրի հերոսամարտի հուշահամալիր՝ հարգանքի ուղևոր մատուցելու գոհված հայորդիներին հիշատակին, ինչպես նաեւ ներկայությամբ Սակար Եվմալյան անվան թիվ 1 երաժշտական դպրոցի բացման արարողությանը։

**Շքանշանների հանձնում
Մայր Աթոռ Սբ Էջմիածնում**

Հոկտեմբերի 9-ին Գետո-
գյան հոգեւոր ճեմարանի հաւ-
նախօրհանների դաիլիճում Ա.
Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրա-
գույն Պատրիարք ըն Ամենայն
Հայոց Գաթողիկոսի հանդիսա-
պետութեամբ տեղի ունեցավ
Հայաստանյայց Առաքելական
Սբ. Եկեղեցու շքանշանների
հանձնման արարողությունը։
Հայրենիքին, Եկեղեցուն և ժո-

վազ նախանձախնդրությունը
Ձեր կարողություններն ու հա-
րուստ փորձառությունը ի
սպաս դնել Շայրենիքի գորաջ-
ման ու պայծառության ստոր
գործին: ... Մենք մշտապես
գտցա՞ց ենք Ձեր շերտ սերն ու
նսփիրումը՝ հակդէտ մեր Սբ-
էնեղեցին եւ հոգեւոր մեր տրբա-
կան կենտրոն Մայր Վոռն Սբ
Էջմիածինը»:



ղովորին մատուցած ծառայությունների եւ վաստակի համար Հայ Եկեղեցու «Սուրբ Ներսէս Ճնորհալի» պատվո բարձր շքանշաններ շնորհեցին Սաբիր Ստեփանյանին եւ Մանուկ Վարդանյանին:

Արարողության ընթացքում մեծարյալների կյանքին եւ ազգօգուտ գործունեությանն անդրադարձան 33 էկոնոմի-

Տիար Մանուկ Վարդանյա-
նի ուղղված հայրապետական
կոնցակում ասված է. «...եր-
կար տարիներ զբաղեցնելով
պետական բարձր պաշտոն-
ներ՝ Ղուք Ձեր կարողություննե-
րն ու փորձառությունը ի
սպաս եք բերում մեր երկրի շի-
նությանն ու պայծառությանը:
Նեղաշխատանքի մեջ արձա-
նեք ազգական հաջորդականներն

Կարծիքի եկեղեցու եպիսկոպոսաց ժողովը

Հոռի սրբազան քահանայապետ Բենեդիկտոս Ժ2 Պապի նախաձեռնությամբ հոկտեմբերի 7-ից Վատիկանում սկսվեց Կաթոլիկ եկեղեցու եպիսկոպոսաց ժողովը՝ «Նոր ապետարանչություն» հանուն քրիստոնեական հավատքի տարածման եւ ամրապնդման» թեմաով:

Երեքշաբաթյա ժողովին մասնակցելու համար Վատիկան էին ժամանել Կաթոլիկ Եկեղեցու ողջ եպիսկոպոսաց դասը, ինչպես նաև ներկայացուցիչներ Ուղղա-

փառ եւ Արեւելյան Ուղղափառ,
Անգլիկան եկեղեցիներից, Էկու-
մենիկ կազմակերպություններից
ու Արեւմուտքի քրիստոնեական
այլ հարանվանություններից:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինադրությամբ Մայր Աթոռ Սբ Էջմիածինի ժողովին մասնակցում էր Մայր Աթոռի հոգեդիր կթափական հաստատությունների վերատեսչի եւ Գեորգյան հոգեդիր ճատարակի տեսչի Գեորգ Եսայ Սարոյանը: Ժողովին սրբազան հայրը հանդես եկավ բժմայի

Հուրջ ելույթով, Ն. Ս. Բենեդիկտոս Ժ2 Պապին փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետի եղբայրական ողջույնները:

Վատիկանում գտնվելու օրերին
Գեորգը սրբազանը հանդիպումներ
ներեցավ նաեւ Վատիկանի պետ-
քաղաքապետ Կարդինալ Տադիաուսո
Բերտոլոնի եւ Զոմի Լիբեռյան Նե-
կեղեցիների բաժանմունքի վարչի
Կարդինալ Լեոնարդո Սանդրինի
եւ Վարդիլիկ Եկեղեցու կոթողական մի-
ջաբեց հաստատությունների պա-
տասխանատուների հետ:

**Ամենայն Հայոց Կաթողիկոսը
մասնակցեց Համաշխարհային հայկական կոնգրեսի
համագումարին**

Հոկտեմբերի 15-ին գիտությանների ազգային ակադեմիայում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնակցեց Համաշխարհային հայկական կոնգրեսի երկրորդ համագումարի բացմանը:

Ողջունելով կոնգրեսի նախագահ Արա Արքրախյանին, համագումարի կազմակերպիչներին ու մասնակիցներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական իր պատգամին ու օրհնությունը բերել նրանց։ Նորին Սրբությունը բարձր գնահատել կոնգրեսի աշխատանքները։ «Այսօր՝ հիմնադրու-մից շուրջ մեկ տասնամյակ անց՝ գոհունակություն է Մեզ համար հաստատել, որ Կոնգրեսը նշանա-կալի իր աջակցությունն է բերում Հայաստանի և Արցախի տնտե-սական, գիտակրթական և մշա-

կուրսային զարգացմանն ու առաջ-
ընթացին, Հայրենիք-Սփյուռք կա-
պերի ամրապնդմանը, Հայոց Ցե-
ղասպանության համընդհանուր
ճանաչման ու դատապարտման եւ
Լեռնային Ղարաբաղի հիմնախնդ-
րի կարգավորման համազգային
շարժեռի...

Այսօր համայն հայության հայազնո մտահոգությամբ ուղղված է դեպի Սիրիա, որտեղ շարունակվող ռազմական գործողությունների արդյունքում ծանր ու անդառնալի կորուստներ է կրում սիրիահայ ազատական համայնքը: Սիրիահայությանը հույս է ապավեն ետ հայրենի մեր պետության, համայն մեր ժողովրդի, ազգային կազմակերպությունների, նաեւ՝ Համաշխարհային հայկական կոնգրեսի սատարումն ու զորակցությունը:

Պժվարությունների մեջ հայտնված մեր եղբայրներին ու քույրերին մատուցվող կյուրական, քաղաքական ու բարոյական աջակցությունը արտահայտում է նաեւ հավատքն ու ազգասիրությունը մեր ժողովրդի, փորձություններն ու մարտահրավերները միասնաբար հաղթանակարելու անսասան կամքը, որոնցով պայքարել ենք և կերտել մեր մեծագույն հաղթանակները»,- ասաց Նորին Սրբությունը՝ արդենով, որ խաղաղությունը շուտով հաստատվի Սիրիայում և սիրիահայ կյանքով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը
կոնքերտի անդամներին մաղթեց
աննկուն հաճառողով, անսկազ
եռանդով շարունակել իրագործել
ազգագուտ եւ աստվածաիւծո
իւրեց առաքելութիւնը:

կայի նախարարության Ընդեր-
քի տրամադրման գործակա-
լության պետ Կորյուն Հակո-
բյանը եւ դոկտոր-պրոֆեսոր
Աղավարդ Խաչատրյանը:

Հայրապետական սրբա-
տառ կոնդակներն ընթերցեցին
Հովակիմ եպս Մանուկյանը եւ
Մուշեղ եպս Բաբայանը:

Սաբիր Ստեփանյանին ուղղված կոնդալստո մասնա-
բաժնի արագեղ ելքված է. «...Առ-
վածպարգեռն ձեր կյանքը հուր-
ողայե՛ն նկիլյալ հայրողի, ապ-
րել է՛ք Հայրենի մեր երկրի
հանդեպ որդիական սիրով՝
միշտ ձգտելով Տիրոջն Ձեզ
պարգե՛ված շնորհները ծառա-
յեցելն հավատավոր մեր ժո-
ղովրդին: Դուք բազմաթիվ
պատասխանատու պաշտոնի
ներ տաճնձեցիք խորհրդային
տարիներին՝ նկիլյալ ջանքեր
բերելով Հայաստանի տնտե-
սության տարբեր ճյուղերի ա-
ռաճընթացին: Անկասկածաբ-
նից հետո շարունակեցիք ակն-

արդյունքն են Ձեր աստվածա-
սեր ու հայրենասեր ոգու եւ
բարեխիղճ, նախանձախնդիր
ծառայության:

Գոհունակություն է Մեզ համար անդորարանակալ նաե՛ր Մայր Աթոռ Սուրբ Եջմիածինի անտուցած Ձեր ծառայություններին: ...Մենք փառք ենք մատուցում Ամենախնամ Բարեխալի՜ն, որ Ձեզ պես հավատալիք Սերը ճակատները շարունակում են եկեղեցական կրթագործունեթով առաջել գորագնէ՜լ ու պայծառացնել Ուաքեթ լակակ մեր Սուրբ Եկեղեցին»:

Այլուհետևեւ Կեհապառ Դայ-
ռապետը պատուի շքանշաննե-
րը հանձնեց Սաբիր Ստեփա-
նյանին ու Կարդառ Մանուկյա-
նին, ովքեր, իրենց հերթին,
շնորհակալություն հայտնեցին
Լորին Սրբութեանը հայրապե-
տական բարձր գնահատանքի
համար:

Լրատվական նյութերը՝ ՄԱՅՐ
ԱԹՈՌ ՄԲ ԷԶՄԻԱՍՆԻ
ՏԵՂԵԿԱՍԿԱԿԱՆ, ՀԱՄԱԿԱՐԳԻ

ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՃԱԳՈՐԾԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

«**Ի՞նչ այնպես է բժում, թե այս ժամանակի չարչարանքներն արժանի չեն բաղդատվելու գալիք փառքի հետ, որ հայտնվելու է մեզ...**»

Թուրք հոռմեացիներին, Ը 18

Այս խոսքերը Նաե Զարենցի համար են ասված: Այս խոսքերի մեջ Զիսուս Զրիստոսի խաչյալ կերպարն է, որ դրոշմվեց մարդկային քաղաքակրթությունն առաջ տանող ընտրյալ զավակների ճակատին:

Արվեստի յուրաքանչյուր ներկայացուցչի բնութագրման նախապայմանը նրա ստեղծագործական անհատականությունն է, եւ ինքն իրեն վերապահած ազատության չափը: Դրանք միասին են եւ պայմանավորված են մեկը մյուսով:

Այս հարցերը թե՛ ընդհանուր ձեռով, թե՛ առանձին գրողների ու արվեստի գործիչների կապակցությամբ արծարծվել են համաշխարհային տեսական մտքի կողմից՝ Պլատոնից մինչեւ Ռիչարդ Ջեմս, Չիգոլդի ֆորմ, Լամբրոգո ու նրանց հետեւողները՝ հոգեվերլուծաբաններից մինչեւ գոյավերլուծաբաններ, ստեղծելով հարուստ գրականություն: Ընդհանուր օրինակաչափություններից զատ, յուրաքանչյուր դեպքում այս հարցերն ունեն անհատական սկիզբ: Ուստի, ակնհայտ են շրջանառված դատողություններից խուսափելու համար սկզբից եւթե այս հարցերը որոշակիացնեց Շիգոլդ Զարենցի անվան շուրջ, ով թե՛ բացառիկ ու եզակի անհատականություն էր, թե՛ ստեղծագործական ազատության վիթխարի ներուժի կրող:

Դաժականվել է Սորոմունյան գեղարվեստին ընտանեկան խմբակարգը, այդտեղ ապագա բանաստեղծը հազիվ լինի տաք տարեկան: Նրա կանգնելու կցվածքի, դիրքի, հայացքի մեջ արդեն իսկ կա փառանքի պատրաստ տղան, ում կերպարը նրան ուղեկցեց ամբողջ կյանքում, իսկ վերջում դարձավ խելահեղ մի նկար՝ պայթույթի դժգոհությունը դեմքին, այրվող ծխախոտը շուրթերին: Առաջին նկարից մինչեւ վերջին նկարը, գրական առաջին քայլերից մինչեւ վերջին ընդգծումները Զարենցը եղել է շատ նույնական, միասնական եւ մշտապես ինքը:

Նա շրջապատից խիստ տարբերվող անհատականություն էր արդեն իսկ պատանեկան տարիներից, երբ գրում էր առաջին բանաստեղծությունները եւ մտա-

ծում առաջին գրքի տպագրության մասին: Ինչպես հետո «Homo sapiens» չափածո նովելում պիտի գրեր, 15-16 տարեկան հասակում արդեն կարողում էր գերմարդու մասին Ֆրիդրիխ Նիցշեի գրքերը, լեհ գրող Ստանիսլավ Պշիբիշեյսկու «Homo sapiens» («Մարդ բանական») վեպը եւ երագրում դառնալ գերմարդ, բարձրանալ իրեն պաշարած գավառական շրջապատից, դառնալ տիտանային, վիթխարի, անսահման, անկրկնելի, բացառիկ ու մեծ...

Այս հատկանիշները նրա մեջ դրսևորվեցին շատ արագ: Անհատականության գծերն ի հայտ եկան առաջին իսկ քայլերից. առանց գրական հովանավորի ու նյութական աջակցության, մշակույթի առումով կորած համարվող Կարսի անհատության մեջ ինքնուրույն վճռեց եւ 17 տարեկանում տպագրեց առաջին գիրքը, ինքնուրույն վճռեց եւ 18 տարեկան հասակում կամավոր մեկնեց գործող ճակատ, վերադարձավ ու մեկնեց Մոսկվա՝ համալսարանում ուսանելու, ետ եկավ հայրենիք, աշխատեց որպես ուսուցիչ, ՀՀ արվեստի ի հանրային կրթության նախարարության հատուկ հանձնարարությունների կոմիսար, ՀԽՍՀ լուսավորության ժողովմատի արվեստի բաժնի վարիչ:

1922 թվականից սկսած՝ Զարենցի կյանքն ու գրական գործունեությունը դառնում են միանոյ: Աշխատում է խմբագրություններում ու հրատարակչությունում: Գործը գիրքն ու գիրքը: Նրա անհատականությունը խորապես ընդգծվեց հատկապես «Երեքի» ղեկարացման

հրատարակելուց հետո: Ամեն գրող չէր դիմի այդպիսի քայլի, բանի որ պահանջվում էր մեծ հանդուրժողություն: Զարենցը դիմեց, որովհետեւ զգաց, որ կարող է միայնակ կանգնել հանրության առջեւ եւ կռվել միշտ անցյալին կառչած նրա պատկերացումների դեմ: Զարենցի դեպքում ավելա-նում է Նաե արտահայտված ներքին ինքնավստահությունը, որովհետեւ հստակ գիտակցում էր, որ ինքը ոչ թե պատահական մարդ է, այլ կոչված է ժամանակի կողմից, որ ինքը պատմական առաջնություն է կատարում, եւ որ իր յուրաքանչյուր արարքին, յուրաքանչյուր տողին պատմությունն է նայում: Այսինքն՝ լինելով խորապես անհատական նկարագիր՝ Զարենցն իր մեջ կրում էր Նաե պատմություն կերտողի պատասխանատվությունը: Սակայն այդ պատասխանատվության բարձր գիտակցությունը չափմանափակեց նրան, չափեց նրա անհատական նկարագրի վրա: Իսկ անհատական նկարագիրը շատ հեռու էր սովորականից. ազատ ու անկաշակնոր իր վարքի բոլոր դրսևորումների մեջ եւ միշտ հասնում էր ծայրահեղությունների՝ թե՛ կենցաղում, թե՛ գրական կյանքում: Կնոջ հուղարկավորության ժամանակ ի կարողացել զգալի իրեն, անընդհատ լաց եւ եղել ու բղավել, իսկ վերջին ուշակորույս ընկել է նրա հողաթմբին: Թաղումից վեց ամիս անց, կնոջ դա-գաղը տեղափոխելու կապակցությամբ, գերեզմանափորին ստիպել է բաց անել կափարիքը: 1930-թ. փորձել է ինքնասպանությամբ վերջ տալ կյանքին եւ կտրել է զարկերակը:

1937-ի ամռանը, երբ Ծաղկածորից ետ էր բերում ընտանիքը, վարձել է գուռնաչի-ներ, ովքեր շարժվող սայլին համընթաց տխուր մեղեդիներ են նվագել, իսկ ինքը զայրույթից խոսքեր է նետել իր ընտանիքին հատկացրած սենյակը զավթած Կենտրոնի անդամի հասցեին: Կնոջ սաստմունքի պատասխանել է. «Թող ժողովուրդը տես- ին, թե ինչպես է հայոց բանաստեղծն անց- նում իր վերջին ճանապարհը»:

Ընկերները ձերբակալված էին, իսկ ինքը դրսում էր. քաղաքից չբացակայելու ստորագրություն էին վերցրել, եւ գտնվում էր հսկողության ներքո: Այս վիճակում անգամ ամեն տեսակի ծայրահեղ արարքներ



է կատարել, որպեսզի ուշադրություն գրավի, եւ իրեն եւս ձերբակալեն: Ասել է՝ որտեղ իմ գրական ընկերները, անգամ հակառակորդները, այնտեղ էլ՝ ես: Իր տեղը տեսնում էր թիարան ըզլված հայոց երգասանների շարքում:

Զարենցին ծանոթ էր հանճարի ու խելագարության վարքը: Բժիշկ-հոգեբույժ Չեգարե Լամբրոգոյի (1835-1909) «Հան- ճարեղությունն է խելագարություն» գիրքը (1863), ուսերեն թարգմանությունը՝ (1885) ծանոթ էր նրան: Իսկ Արփիկը ժամանա- կին գնել էր Սյուլի Ջեյմսի (1843-1923) նույ- նանուն՝ «Гениальность и помешательство» («Հանճարեղությունն է խելագարություն») (С-П-6, 1895) գիրքը: Նրա գրադարանը լի էր այս եւ ինգլիզերենով գրված տարբեր հարցերի նվիրված գրքերով: Բայց նա ոչ թե գալիս էր գրքից, այլ իր վարքով մի տոր գիրք էր գրում, որի հերոսն էլ էր ինքը, ար- ձանագրողն էլ՝ որպես բանաստեղծու- թյուն ու խոսք:

